չի յաջողէր ըրած փորձին մէջ։ Միւս կողմանէ այնչափ տիրացած էր հին սովորութիւնը, որ Իպրահիմ փաշայի մահուամբ մէկդի թողուեցաւ այս նոր ոճը, մինչեւ որ Սայիտ փաշայի գահակալութեամբ վերստին սկսաւ գործածուիլ։ Անկէ վերջը մինչեւ մեր օրերը միշտ գործածութեան մէջ է, եւ հետզհետէ կատարելագործուելու եւ պարզանալու հետ է՝ պաշտօնական տեղեկագիրներու համար յատուկ՝ պարզ եւ յստակ լեզու մի կազմելու, ինչպէս կը գործածուի Եւրոպայի մէջ։

Ինչպէս ըսինք յառաջ, Արթին պէյ քաղաքականին մէջ պաշայի աստիճանը եւ զինուորականի մէջ ֆէրիքի աստիճանն ունէր։

Ունէր դարձեալ շքանշաններ, ադամանդակուռ Նիշանի Իֆթիխար՝ զոր Սուլթան Մահմուտ հաստատեր էր, Գաղղիոյ՝ Պատուոյ Լեգէոնին Հրամանատար էր, Նէապոլսոյ՝ Ս. Փրանկիսկոսի Մեծ Խաչուէն, Պորտուգալի՝ Քրիստոսի կարգին Մեծ Խաչուէն, Հռովմայ՝ Մեծին Գրիգորի Հրամանատար, Պրուսիոյ՝ Կարմիր Արծւոյն, եւ Ռուսիոյ՝ ադամանդակուռ Ս. Աննայի Հրամանատար, եւն։

Ե.

ԱԶԳԱՅԻՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ ՄԸ

Գոհունակութեամբ կը ծանուցանէր Բազմավէպ նախընթաց տարւոյ պրակաց մէջ, ազգային երգիչներու եւ այլ ճարտար անձանց փայլն ու համբաւը յԻտալիա եւ այլուր։ Այժմ եւս մեծաւ գոհունակութեամբ կը ծանուցանէ ազգային ճարտարապետի մը դափնիով պսակուիլն ի Հռովմ՝ արքունական Համալսարանին մէջ, ի սքանչանս ըմբռնելով ոչ միայն իւր դասընկերները, այլ նոյն ինքն եւ իւր մեծանուն վարժապետներն ու ճարտարապետները։

Տրապիզոնցի է պարոն Լեւոն Կիւրեղեան, շառաւիղ ազնիւ եւ երեւելի գերդաստանի մը։ Իր ուսումն ըրած է ի Մուրատ-Ռափայէլեան վարժարանի, ուր ամենայն յաջողութեամբ աւարտած է իւր ընթացքը 1888ին, ներհուն հանդիսանալով հին եւ նոր հայերէնի, եւրոպական լեզուաց եւ մասնաւորապէս բնաբանական գիտութեանց։ Հազիւ իւր սիրելեաց գիրկը դարձած՝ ինչպէս կ'երգէ իւր Հրաժեշտ առ սիրելիս քերթուածին մէջ,

Չէ տակաւին լրացեալ մի ամ
Հերձեալ զՀանդրին ալիս՝ յորժամ
Ցիմ ծննդեան չուէի յաշխարհ...

եւ ահա կ'ըսէ դարձեալ, ինչպէս անուշաբոյր ծաղիկն ի ճղէն,

Այսպէս կորզեալ յիմ սիրելեաց
Գրրկէն ի բաց,
Յօտարութիւն անդրէն դիմեմ
Ես տարաղէմ...

Կը հասնի Լ. Կիւրեղեան ի Հռովմ, կը ներկայանայ Գեղարուեստից արքունական Ակադեմիային մեծահռչակ վարժապետաց, որք քննելով զնա բնաբանականին ամէն ճիւղերուն մէջ, ըստ ամենայնի գոհ կ'ըլլան տուած պատասխաններէն, եւ գործնականը միայն պակաս կը գտնեն։ Պր. Լեւոն կը նետուի փութով յասպարէզ ճարտարապետութեան ստորին ընթացից (Corso inferiore d'Architettura), եւ երկու տարուան մէջ չորս տարուան ընթացքը կը լրացընէ, մրցումներ (Concorso) տալով։

Գանձէ զարդի գծագրութեան մրցման՝ Ա. արծաթ (1) մետալ կ'առնու իւր վկայականաւ.

1. Ոսկի մետալ տալու սովորութիւն չի կայ Իտա-

digitised by A.R.A.R.@

ընդօրինակութեան (Prospettiva) մրցման Ա. արծաթ մետալ իւր վկայականաւ։

Այս յաջող մրցումները տալէ յետոյ կը սկսի ճարտարապետութեան և կ՚ուսանի,

Ա. տարի Յօրինական ոճ և Շարադրութիւն (Composizione), և կ՚առնու Բ. մետալ իւր վկայականաւ։

Բ. տարի Համեմատական ոճ և Շարադրութիւն, և կ՚առնու Բ. մետալ իւր վկայականաւ։

Գ. տարի Վերաժնութիւն և Շարադրութիւն, և նոյնպէս Բ. մետալ (1) իւր վկայականաւ։

Գալով գիտութեանց կ՚ուսանի

Մեքենական-կշռական գործնական, կ՚առնու Ա. մետալ իւր վկայականաւ.

Երկրաբանութիւն-գործնական շինուածոց, կ՚առնու Բ. մետալ (2) իւր վկայականաւ.

Տարրաբանութիւն գործնական, կ՚առնու Ա. մետալ իւր վկայականաւ.

Յետոյ քննութիւն մը տալով՝ որ քննիչ յանձնաժողովէն տրուած առաջարկութիւն (progetto) մը 20 օրուան մէջ ամբողջովին պարզելուն մէջ կը կայանայ, ճարտարապետութեան ուսուցչի վկայականը կ՚ընդունի։

Պրոֆ. Կիւրեղեան կը մտնէ այնուհետև ճարտարապետաց (Ingegnere) արքունական Համալսարանը, և սկսելով ճարտարապետութեան Լրացուցիչ ընթացից (Corso complementare d'Architettura), որ երկու տարի կը տևէ, կը սորվի բարձրագոյն ուսմունքներ, ինչպէս

Բարձրագոյն հաշիւ.

Դիմադրութիւն նիւթոց (Resistenza dei materiali).

Շինողութիւն (Costruzione).

Գործնական փորձառական տարրաբանութիւն.

Գործնական քնապանութիւն (տուները ջերմցնելու և հովահարելու ուսմունքը).

Ջրաբաշխութիւն (տուներու առողջապահական պայմանները և կոյանոցներու բարելաւման կանոններն ու միջոցները).

Տեղագրութիւն.

Ճարտարապետական ասպարէզին պատկանող իրաւագիտական նիւթեր.

Արուեստագիտական ճարտարապետութիւն։

Այս ընթացքին մէջ ամենալաւ թիւեր առնելով, Պսակի (Laurea) քննութեան կ՚ընդունուի, որ նոյնպէս քննիչ յանձնաժողովէն առաջարկութիւն մը լուծելուն մէջ կը կայանայ, 15 օրուան մէջ՝ իրենց պահանջածին համեմատ։

Արդ, Կիւրեղեանց, ստուգէ այն առածը որ կ՚ըսէ թէ հայ հանճարն ընդունակ է ամէն բանի։

Կու գայ կը հասնի վերջին օրը, Կիւրեղեան կը ներկայանայ անխտով Յանձնաժողովին, կու տայ ձայնաւոր քննութիւնը առաջի հռչակաւոր վարժապետաց և ճարտարապետաց, և Հայ մը 12 թիւ առաւելութեամբ քան զբոլոր Իտալացիս Համալսարանին՝ կը կորզէ ճարտարապետութեան դափնեպսակը։ Կեցցէ՛ս, Հայ հանճար, որ օտարին լեզուով քան զօտարը կը գերազանցես, շորթելով նորա գիտութիւնն ու պսակը։

Երիտասարդ ճարտարապետը քաջ պատկերահան ալ է, կը գործէ կիթառ և ջութակ, ունի ծրար մը անտիպ գողտրիկ բանաստեղծութիւններ՝ իմ Տաղերս մակագրութեամբ, որոց մէջ ակնյայտնի կ՚երևի զգայուն սիրտ, աշխոյժ միտք, վառ երևակայութիւն։

Զարմանալով Պրոֆ. Կիւրեղեանի բազմակողմանի հանճարոյն վրայ ի սրտէ կը մաղթենք փայլուն ապագայ մը, ուրախակից ըլլալով իրեն՝ որ այսպէս յաջողութեամբ աւարտեց այս պժուարակոխ ընթացքը. և ազգիս՝ որ այսպիսի հմուտ և զարմացնելի ի քաջանուն վարժապետաց վկայեալ՝ ճարտարապետ մը ունեցաւ։

ևոյ արքունական Ակադեմիայից մէջ, իսկ Համալսարանին մէջ և ոչ մին։

1. Այս երեք տարուան մէջ ընկերներէն ոչ ոք Ա. մետալ կը յաջողի առնուլ։

2. Ոչ ոք Ա.